

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ “ԼՈՒԾՈՒՄԵ ԲԱՆԻՑՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ” ԼՈՒԾՄՈՒՆՔ-ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ<sup>1</sup>

### ԱՆԱ ՕՀԱՆՁԱՆՅԱՆ

Հայտնի է, որ ընդհանրական եկեղեցու 4-րդ դարի կապաղովկիական հայր, «աստվածաբան» անուն-տիտղոսը կրող Գրիգոր Նազիանզացու (328-389/90) մատենագրության մեծ մասը հայերեն է թարգմանվել դեռ 5-րդ դարում և լայն կիրառություն գտել Հայ եկեղեցու աստվածաբանական-դավանաբանական բնույթի գրականության մեջ, որից քաղումներ են արել այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Մովսես Խորենացին<sup>2</sup>, Անանիա Շիրակացին, Ստեփանոս Սյունեցին, Ստեփանոս Ասողիկը, Գիրգոր Տղան, Վարդան Այգեկցին, Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին և այլք<sup>3</sup>: Գրիգոր Նազիանզացու երկերը անուրանալի ազգեցություն են ունեցել Հայ աստվածաբանական մտքի զարգացման և բյուրեղացման վրա: Մեզանում մասնավոր ուշադրության են արժանացել նրա ճառաշարերը, որոնցից հայերեն թարգմանությամբ մեզ են հասել «Առ որս», «Քրիստոս ծնեալ», «Յաղթեցայ», «Որք յեգիպառսէն են» շարքերը<sup>4</sup>:

Մեզ հետաքրքրող «Քրիստոս ծնեալ» ճառաշարը բաղկացած է տասներկու միավորից, որոնցից հրատարակվել է միայն ամիավորը՝ նվիրված Քրիստոսի ծննդին<sup>5</sup>: Այս ճառաշարի «Ի ծնունդն Քրիստոսի», «Նորին ի յայտնութիւն Տեառն» և «Նորին ի մկրտութիւնն» ճառերը, որոնք ճառաշարի ա, թ և գ միավորներն են, իրենց համառոտ պատճառ-նախաբաններով հանդերձ, ընդգրկվել են միջնադարյան Հայ աստվածաբանական-մեկնողական երկերի մեջ՝ Հատվածաբար կամ ամբողջովին, քանի որ առանցքային նշանակություն են ունեցել Հայ եկեղեցու քրիստոսաբանության վաղեմությունը և ճշմարտացիությունը փաստելու և ջատագովելու համար: Այսպես, Ստեփանոս Սյունեցին մեջբերումներ է անում «Քրիստոս ծնեալ» ճառաշարի «Ի ծնունդն Քրիտոսի» և «Ի սուրբ պատքայ» միավոր-

<sup>1</sup> Սույն հոդվածը տպագրվում է 13-6D381 ծածկագիրը կրող «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> Տես, Նորայր Բուզանդացի, թօնաւոր, Բ, 1887, էջ 56-62, նաև՝ Խալաթյանց Գ., Մովսէս Խորենացի և իր աղբիւրները, Յաւելուած Արարատի, 1897, նոյեմբեր և դեկտեմբեր, էջ 531-539: Սուրառեյան Կ., Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Եր., 1983, էջ 141-142:

<sup>3</sup> Մանրամասները տես, Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 143-168:

<sup>4</sup> Տես Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 69-84, Անասյան Յ., Հայկական մատենագրություն (Ե-ԺԸ դդ.), հտ. Ա, Եր., 1959, էջ XLII:

<sup>5</sup> Տես, Գիրք և ճառ հոգեշահ, Կ.Պոլիս, 1722, էջ 7-28:

**Ներից երկաբնակների գեմ գրված իր հակաճառական երկում<sup>1</sup>:** Առավել հաճախ նշված ճառերը հղվել են սուրբ Ծնունդը և Մկրտությունը միասին հունվարի 6-ին տոնելու Հայ եկեղեցու ավանդույթի վավերականությունը ընդգծելու նկատառումով, ինչպես օրինակ Անանիա Շիրակացու երկերում:

Հայ մատենագրության ընտիր գոհարներից են Գրիգոր Նազիանզացու վերոնշյալ ճառաշարերի անանուն և հեղինակային մի շարք լուծմունքները: Հատկապես շատ են մեկնվել «Առ որս» և «Քրիստոս ծնեալ» շարքերը: Հիշատակություններ կան «Քրիստոս ծնեալ»-ի դժվարընկալելի և աստվածաբանական-հակաճառական տեսանկյունից կարևորություն ներկայացնող հատվածների լուծմունք-մեկնությունների մասին՝ Հովհաննես Սարկավագի (1057-1129/30<sup>2</sup>), Ներսես Շնորհալու (մոտ 1100 - 1173), Վարդան Հաղբատեցու (մահ. 1191թ.), Եղիշ Ասորու (12-րդ դ. երկրորդ կես), Միհիթար Գոշի (1120-ական թթ. - 1213), Դավիթ Քոբայրեցու (1150-1220), Մեսրոպ Գանձակեցու (18-րդ դ. կես) և այլոց հեղինակությամբ:

Պետք է նշել, որ «Քրիստոս ծնեալ»-ի որոշ լուծմունքներ հեղինակային են, մյուսները, ինչպես օրինակ, Մեսրոպ Գանձակեցունը, նախորդ լուծմունքներից արված ծաղկաքաղեր<sup>3</sup>: Բացի այդ, դրանց մի մասն ունի հեղինակային նշում, մյուսներն անանուն են կամ ուղղակի անհայտ: Այսպիս, օրինակ, Ղ. Ալիշանի պնդմամբ Ներսես Շնորհալին գրել է “Քրիստոս ծնեալ”-ի մեկնությունը, որը հետագայում աղբյուր է ծառայել Վարդան Հաղպատեցուն նույն ճառի լուծմունք-խմբագրությունը գրելու համար<sup>4</sup>, թեև Ն. Ակինյանը կասկածի տակ է առնում Վարդան Հաղպատեցու խմբա-

<sup>1</sup> Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 149:

<sup>2</sup> Հովհաննես Սարկավագի ծննդյան թվականը դնում ենք ըստ Գայանե Սիմոնյանի “Հովհաննես Սարկավագը և իր “Մեկնութիւն Տումարիս Յայկազնեայ”-ը” վերտառությամբ ատենախոսության, (2013 թ. դեկտեմբեր), էջ 45: Հեղինակը տարարույր աղբյուրների վերլուծության արդյունքում ճշտում է Սարկավագի ծննդյան հստակ թվականը:

<sup>3</sup> Այս մասին նշում ունի հենց ինքը հեղինակը: Գրիգոր Աստվածաբանի “Առ որս” և “Քրիստոս ծնեալ” ճառաշարերի լուծմունքները պարունակող իր ինքնագիր ժողովածոյում (ՄՄ, 1466), Մեսրոպ Գանձակեցին գրում է, որ. «Յերկրտն Աղոյանից մեղապարտ Մեսրոպ, անարժան քահանայ և կրօնաւոր, յըթերնուկն ոչ կարէի իմանալ զօրութիւն սորա, և իմ խնդրեալ և որոնեալ աստ և անդ թերևս գտանի զլուծնուն ինչ կամ մեկնութիւնս. ոչ ուրէք գդի զկատարեալն, բայց միայն Գերրեայ վարդապետի Եղմնացւոյ համաօստ լուծմունքն և զայն հոյժ ծաղկաքաղ եղեալ և ընդարձակ քայլափոխեալ (թ. 1ա)... յետ այսորիկ եհաս ինձ ընթանալ ուխտ և երկրպագութիւն ի մեծ և գերահոչակ առաքելական Աթոսն՝ Տաթև... և գտի անդ ի գրադարանն զմեծ գիրը նի զոր գրեալ էր Սիմեօն աշակերտն Տաթևացւոյ, նորին հրամանաւն երեսուն գրոց լուծմունք ի միում տփի կապեալ... բայց ոչ գոյ զնակագիրն շինողին գրեալ, թե ո՞վ ոք էր... (թ. 1բ)... եւ ոմաք ի հարազատ եղբարցն յորդորեցին զիս ի մի վայր ժողովել այս երկու լուծմունք՝ զիհնն և զԳերբայն, և այսու պատճառավ ի մի վայր ժողովեցի այս երկու լուծմունք, այլև զպական աստուստ և անտուստ, զորս ի սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ գրեանցն, զորս ի մեկնաց մերոց վարդապետացն ժողովեցի և եղի աստ ... և զիւրաքանչյուր ճառս ի գլուխս բաժանեցի և հանդեպ բնաբանին զմեկնութիւն գրեցի և կարմիր գրով նշանակեցի (թ. 2ա):»:

<sup>4</sup> Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայթ իւր, Վենետիկ, 1873, էջ 262-265:

գիր լինելու փաստը, քանի որ Ալիշանը չի նշում իր աղբյուրները<sup>1</sup>: Ցավոք, Ներսես Շնորհալու մեկնությունը մեզ չի հասել, կամ էլ պետք է փնտրվի անանուն լուծմունքների շարքում, սակայն վարդան Հաղպատեցու լուծմունքի մասին մեզ որոշակի պատկերացումներ է տալիս ՄՄ 2021 ձեռագիրը, որը նրա խմբագրած Տաւնապատճառ ժողովածույթի ավելի ուշ ընդօրինակությունն է<sup>2</sup>: Ուշագրավ է, որ 11-րդ դարից ի վեր «Քրիստոս ծննդալ»-ի լուծմունքների ամենատարբեր խմբագրություններ տեղ են գտել մի շարք մեկնողական և հակածառական բնույթ ունեցող ժողովածուներում, այդ թվում նաև Տաւնապատճառ ժողովածուներում<sup>3</sup>, որոնց ուսումնասիրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս որոշակի ճշտգրտումներ անել, այլև նորանոր աղբյուրներ բացահայտել՝ լուծելով մինչ օրս անլուծելի թվացող մի շարք հեղինակային և տեքստաբանական խնդիրներ: Այնուամենայնիվ, մեր նպատակը չէ այստեղ անդրադառնալ վերոնշյալ խնդիրներին: Սույն հոգվածում միայն ներկայացնելու ենք «Քրիստոս ծննդալ» ճառաշարի ամիավորի թերևս ամենավաղ գրված լուծմունք-մեկնության, այն է՝ Հովհաննես Սարկավագի «Լուծումն բանիցն Աստվածաբանին» բնագիրը:

Վերը նշվեց, որ Հովհաննես Սարկավագը գրել է Գրիգոր Նազիանզացու «Քրիստոս ծննդալ»-ի լուծմունքը: Կ. Մուրադյանը բնագրերի հատվածային համեմատությամբ ցույց է տալիս, որ Հովհաննեսը օգտվել է Գրիգոր Աստվածաբանի երկերից, մասնավորապես, մեջբերումներ է արել «Առ որս» ճառաշարից և “Առ կղեղոնիոս” գրված թղթից<sup>4</sup>: Ինչ վերաբերում է «Քրիստոս ծննդալ»-ի սարկավագյան լուծմունքին, որը մեզ է հասել 5596 թվակիր Ճեռագրով<sup>5</sup>, ապա պետք է ասել, որ հարցին այս կամ այն չափով անդրադարձել են Կ. Միրումյանը<sup>6</sup> և Կ. Մուրադյանը<sup>7</sup>, այն անվերապահունակ համարելով Սարկավագի գրչին պատկանող գործ:

Կ. Միրումյանը, հիմք ընդունելով Հովհաննես սարկավագի «նա՛ յանապատէ, և ես՝ քահանայապետի որդի»<sup>8</sup> տողը, գրում է. «Այս նախադասությունից պարզ երևում է, որ խոսքը վերաբերում է Աստվածաբանին և Սարկավագին, որովհետև «քահանայապետ» բառը ունեցել է նաև «քահա-

<sup>1</sup> Ակինյան Ն., Վարդան Վարդապետ Յաղբատեցի, Մատենագրական հետազոտություններ, հն. 1, Վիեննա, 1922, էջ 70-71:

<sup>2</sup> Տես, ՄՄ 2021, Տաւնապատճառ, թթ. 43ա-49թ:

<sup>3</sup> Տես, ՄՄ 4139, թթ. 30ա-39ա, ՄՄ 5443, թթ. 126թ-144ա, ՄՄ 2771, թթ. 85թ-95թ, ՄՄ 5561, թթ. 243թ-252ա:

<sup>4</sup> Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 152:

<sup>5</sup> ՄՄ 5596, թթ. 98թ-111թ:

<sup>6</sup> Միրումյան Կ., Յովհաննես Սարկավագի երկու իմաստասիրական գրվածքները և դրանց արժեքը, Պատմա-քանասիրական հանդես, № 2, 1979, էջ 154-155:

<sup>7</sup> Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 151, 186-188:

<sup>8</sup> Այս և հետագա ընդգծումները մերմ են:

նա» իմաստը: Իսկ մեզ ստույգ հայտնի է, որ Հովհաննեսի հայրը քահանա է եղել»<sup>1</sup>:

Մեր խորին համոզմամբ, սակայն, այստեղ խոսքը ոչ թե Գրիգոր Աստվածաբանի և Հովհաննես Սարկավագի մասին է, այլ Հովհաննես Մկրտչի և Գրիգոր Աստվածաբանի: Սարկավագը մեկնում է Գրիգոր Նազիանզացու հետևյալ տողերը. «Յովիաննէս գոչեսցէ. Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն (Հմմտ. Մատթ. Գ 3): Եւ ես (իմա՝ Գրիգոր Նազիանզացին – Ա.Օ.) գոչեցից զատորս գօրութիւն»<sup>3</sup>:

Հստակ է, որ մեկնելով այս հատվածի «Յովիաննէս գոչեսցէ» և «Եւ ես գոչեցից» արտահայտությունները, Հովհաննես Սարկավագը համեմատական է անցկացնում Հովհաննես Մկրտչի և Գրիգոր Նազիանզացու միջև, ասելով. “Եա, այսինքն՝ Հովհաննես Մկրտիչը, յանապատէ և ես՝ Գրիգորը՝ բահանայապետի որդի»: Ավելին, հայտնի է, որ Հովհաննես Մկրտիչը ճգնակեցական կյանք էր վարում անապատում՝ սնվելով վայրի մեղրով և մորեխներով (Մատթ. Գ 4), այսինքն՝ «յանապատէ» էր, կամ եսայի մարգարեի խոսքերով՝ “ձայն բարբառոյ յանապատի” (Ես. Խ 3): Պակաս հայտնի փաստ չէ նաև այն, որ Գրիգոր Նազիանզացու հայրը, սկզբում լինելով իփսիստարիոսների գլխավոր քրմերից, մոր՝ Նոննայի աղերսներով և աղոթքներով դարձի է գալիս քրիստոնեության և հետագայում եպիսկոպոս ձեռնադրվում<sup>4</sup>: Այսինքն՝ Գրիգոր Նազիանզացին նույնպես «քահանայապետի» որդի էր, և անհիմն է վերոբերյալ տողերի հիման վրա համեմատական անցկացնել Գրիգոր Ատվածաբանի և Հովհաննես Սարկավագի միջև՝ փաստելու համար Սարկավագի հեղինակ լինելը:

Այնուամենայնիվ, մենք ծանրակշիռ փաստարկներ չունենք Հովհաննես Սարկավագի՝ այս լուծմունքի հեղինակ լինելու փաստը հերքելու համար, թեև, ստորև ներկայացվող բնագրի խորագրից զատ, մատենագրության մեջ ոչ մի ուղղակի վկայություն չկա նաև այն մասին, որ Հովհաննես Սարկավագը գրել է նման լուծմունք: Հովհաննես Սարկավագի վարքում տեղեկություն կա այն մասին միայն, որ նա «յամենայն դէմս բանի և գործոյ, տեսութեան և յառաջբերութեան, գրելոյ և ընթեռնելոյ, պատմագրութեան և վարդապետական վերլուծութեան, մարգարէականին և առաքելականին այնպէս կատարելագոյն գտաւ որպէս ոչ ոք, մի մինն միայն համ-

<sup>1</sup> Միրումյան Կ., նշվ. աշխ., էջ 155, տողատակ 4:

<sup>2</sup> Զայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, Եւ ուղիղ արարէք զշավիլս նորա (Մատթ. Գ 3, հմմտ. Ես. Խ 3):

<sup>3</sup> Տես, Գիրք և ճառ հոգեշահ, նշվ. աշխ., էջ 8:

<sup>4</sup> Տես, **Флоровский Г.**, Восточные отцы Церкви, М., 2005, стр. 139.

բաւեալ՝ կամ ի գործս, կամ արդիւնս»<sup>1</sup>, ինչից կարելի է ենթադրել, որ նա նաև աստվածաբանական մեկնություն-լուծմունքների հեղինակ է եղել:

Հարկ է նշել, որ Կ. Մուրադյանը Հովհաննես Սարկավագի լուծմունքը, մյուս լուծմունքների համեմատ, համարում է յուրօրինակ և ինքնատիպ, քանի որ «մեկնիչը վերանում է առաջադրվող բացատրության շրջանակ-ներից և այլաղբյուր վկայություններով է օժտում այն»<sup>2</sup>, այսինքն՝ տեքստը համեմում է փիլիսոփայական և բնագիտական մեկնություններով: Ի տարբերություն Կ. Միրումյանի, որը Սարկավագի լուծմունքի բնագիտական հատվածների աղբյուր է համարում Արիստոտելի և Նեմեսիոս Եմեսացու երկերը<sup>3</sup>, Կ. Մուրադյանը ցույց է տալիս, որ Սարկավագի աղբյուրը նախ և առաջ Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեայ»-ն է, որից նա բառացի, կամ վերապատճելու եղանակով մեջբերումներ է արել<sup>4</sup>:

Այնուամենայնիվ, «Քրիստոս ծնեալ»-ի լուծմունքները բոլորն էլ յուրօրինակ են, քանի որ յուրաքանչյուր հեղինակ ինքն է որոշում, թե տեքստի որ հատվածներն են ենթակա մեկնության, վերլուծության, լուսաբանման, ինչը պայմանավորված է նաև լուծմունքը գրելու նպատակով: Դատելով Հովհաննես Սարկավագի լուծմունքի բովանդակությունից և ընտրված հատվածներից, նա նպատակ է ունեցել հատուկ անդրադառնալ քրիստոսաբանության տեսանկյունից կարենոր դրվագներին, ինչպես նաև Գրիգոր Աստվածաբանի «շուրթերով» քրիստոնյաներին խրատել և ուղենչել քրիստոնեավայել ապրելու ճանապարհները: Սարկավագի լուծմունքի հետքերը տեսանելի են ավելի ուշ գրված «Քրիստոս ծնեալ»-ի լուծմունք-ներում:

\*\*\*

### Բնագիրը տրվում է ըստ՝

**ՄՄ 5596 ժողովածու: ԺԳ դար: Գրիչ-ստացող՝ Աստոածատուր: Թերթ՝ 346: Թուղթ՝ 17X13: Կազմ՝ կտղ: Աստառ՝ սպիտակ կտակ: Յիշատակարան՝ 48թ, 216թ:**

Թերագրային առանձնահատկություններ: Ձեռագրի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ բառամիջում և բառավերջում է=ե տառին, օժանդակ բայերի դեպքում երբեմն է, երբեմն ե տառն է գրվում, բառավերջի ո

<sup>1</sup> Հանդես բանի վասն երանեալ առն ասուուծոյ Սարկավագին կենաց և մահուն և այլոց սրբոց հուայան ժամանակս, Յովհաննես Ինաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ, 120: Շնորհակալ Ենք Գ. Սիմոնյանին, ով մեր ուշադրությունն այս վկայության վրա բներեց: Տես նաև, Սիմոնյան Գ., “Յովհաննես Սարկավագը և իր “Մեկնութիւն Տումարիս Յայկագնեայ» (ատենախոսություն), էջ 28:

<sup>2</sup> Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 187:

<sup>3</sup> Միրումյան Կ., նշվ. աշխ., էջ 158:

<sup>4</sup> Նույն տեղում, տողատակ 49:

տառից առաջ ւ՝ը չի դրվում, օր.՝ հոգոյ = հոգւոյ, բառավերջի ձայնավորից հետո գրեթե բոլոր եղանակներում յ տառն ընկնում է: Աւ = աւ, բառամիջի ե-ն որոշ բառերում սղվում է, օր.՝ հրշտակ, երբեմն ե=ը, օր.՝ հրըշտակ, բառամիջի ը-ն երբեմն գրվում է, օր.՝ ծնընդեամբ, բառասկզբի զ=ս, օր.՝ սգեցաւ, երբեմն կ=գ, օր.՝ ընգղմել, երբեմն դ=խ, օր.՝ փաղչել, երբեմն ն=մ, օր.՝ անփոփել, երբեմն տ=դ, օր.՝ ընդանի և այլն:

Բնագրում Գրիգոր Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» ճառի համառոտված տեքստը վերականգնել ենք ուղիղ [ ] փակագծերում՝ ըստ «Գիրք և ճառ հոգեշահ» ժողովածույում հրատարակված տեքստի:

Բնագրում համառոտված սուրբգրային համարները նույնպես վերականգնել ենք ուղիղ [ ] փակագծերում՝ հիմք ընդունելով Աստվածաշունչ Մատեանի 1997թ. Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության հրատարակությունը:

### ԼՈՒԾՈՒՄՆ ԲԱՆԻՑՆ ԱՍՏՈԱՇԱԲԱՆԻ ՍԱՐԿԱՒԱԳԻՒՆ<sup>1</sup>

Քրիստոս ծնեալ: Հայրական ծնունդն:

Լինի: Ի Կուսեն ծնունդն:

Փառառեցե՛ք: Արդար և առաքինի վարուք:

Քրիստոս յերկնից: Անմարմին վարուք հանդիպեցարուք:

Քրիստոս ի վերայ երկիր: Աստուած՝ մարդ եղեալ և երկնայինն յերկիր խոնարհեալ: Բարձրանալ<sup>2</sup> պարտ ե իբրև զՄովսես և ելանել ի Սինեա:

Երգեցե՛ք Տեառն երգ նոր: Աւքնեցե՛ք զՏէր յաւրհնութիւն նոր:

Աւրինեցե՛ք զՏէր ամենայն երկիր: Ոչ միայն հրէայք, այլև հեթանոսք:

Եւ զի երկոսեանն միանգամայն առնելով ասացից] ուրախ լիցին երկինք և ցնծացե երկիր]: Երկիր երկնայն և երկիր երկնաւ վասն զի յաշտութիւն եղև հրեշտակաց ընդ մարդկան:

Յաղագս երկնառին: Որ ի սկզբանեն եր:

Եւ ապա երկրասրիս: Որ միացաւ ի մարմնի Աստուած Բանն:

Դողաբրվ և խնդրեամբ: Մառայեցե՛ք Տեառն երկեղիւ: Վասն յանցանացն դողալ պարտ ե և խնդրութեամբ ակն ունել հատուցմանն վերջին:

Կանայք, կոյսք լերուք: Կարողանան և արամբիքն լինել մայր Քրիստոսի, որպես ինքն վկայէ. «Ո՞վ ե [իմ] մայր» (Մատթ. ԺԲ 48): Զաչ սպ///ել<sup>3</sup> ի չարէ և զայլ սպայո: |99ա|

<sup>1</sup> Բնագրի ուղղագրությունը պահպանել ենք:

<sup>2</sup> Բնագրում՝ բարձրան<ան>ալ:

<sup>3</sup> Անընթեռնելի է:

**Ո՞վ ոչ երկիր պազցե, որ ի սկսբանն [էր]: Ի սկբանէ Բանն, իսկսբանն եր, որ արար իսկսբանն:**

**[Ո՞վ ոչ փառաւորեսցէ] որ ի կատարածին է, որ նորոգ յարութեամբն:**

**Դարձեալ լրյս հաստատի: Ասաց Աստուած՝ եղիցի լոյս, և եղե:**

**Դարձեալ խաւար լրւանի: Մի՛ իսկսբանն և Եղիպտոսին և մարմնանաւ-լովն կռապաշտութեանն:**

**Եղիպտոս խաւարաւ տանջի: Սատանա և իւրքն:**

**Խսրան սեամբ լրսաւորի: Ամենայն հաւատացեալք:**

**Ժողովրդը, որ նստէիր ի խաւարի: Հեթանոսք ի կոա[պաշտութեան]:**

**Տեսե՛ք զոյս մեծ գիտ[ութեան]: ԶԵՐՈՊՈՒԹԵԱՆՆ խոստ[ումն]:**

**Առաջինն էանց: Կռապաշտութիւն:**

**Գիրն տեղի տա: Աւրենքն:**

**Հոգին յաղթահարե: Աւետարանն:**

**Սոուերբն անց[անեն]: Կոա[պաշտութիւն]:**

**Մելքիսեդեկ ժողովի, անհայրն անմայրն [լինի]: Ո՛չ սկիզբն աւուրց և ո՛չ կատարած կենաց, թագաւոր խաղաղութեան, քահանայապետ: Ամենայն ի Քրիստոս ժողովեցան: Մեկնելով ամէ՝ անմայր յառաջն[ում] ի Հաւրէ ծնընդեամբն, անհայր յերկր[որդումս]՝ ի Կուսէ ծնընդեամբն:**

**Աւեննը բնութեանն քակտին: Առանց ցաւոց և տրտմութեան ծնանիլ ի առանց սերման, որպես վկայէ Դանիել:**

**Ամենայն հեթ/99թ/անոսք կայթեցնը ձեռ[աւր]: Ո՛չ մարմնով ուրախանալ, այլ հոգոյն սգայարանաւք զուարճանալ:**

**Զի մանուկ ծնաւ: Ի հրեից, և տուաւ հեթանոսաց:**

**Յովաննես գոչեսցէ՝ [պատրաստ արարեք զանապարիս Տեառն]: ԶԵ-սայեայն՝ ես «Ճայն բարբառոյ յանապատին»» (Ես. Խ 3), և եթե՝ «Ո՞ եցոյց ձեզ փաղչել ի բարկ[ութենեն, որ գալոցն է]» (Մատթ. Գ 7):**

**Եւ ես գոչեցից [զաւորս զարութիւն]: Նա յանապատե, և ես՝ քահանայապեի որդի, և ես //<sup>1</sup>:**

**Անմարմինն մարմնանա: Հստ Յոհաննու Բանն մարմին լինի (Հմմտ. Յովհ. Ա 14):**

**Բանն թանձրանա: Տեսանելի լինի և շաւշափելի: Յինքն ձգեալ յարենե Կուսին զնիւթ մարմնոյն թանձրանա ի մարմին, ըստ աւրինի՝ յորժամ ի հրացանութենէ փայլական հրոյ հոսեալ յաւդս յինքն անփոփե զբնութիւն և զիսոնաւութիւն ջրոյ և այնպես պրկմամբ ուղոյն թանձրանա՝ մածեալ եռացմամբ աւդոյն, և կարծրացեալ՝ քարանա: Բայց մի՛ ոք ամենայնիւ զաւրինակն մերձ դիցէ ճշմարտութեանն, զի անդ չփոթումն և ապականու-**

<sup>1</sup> Անընթեռնելի է:

թիւն իւրաքանչիւր բնութեան, իսկ աստ կենդանի հուր աստուածութեանն՝ իջեալ յորովայն Կուսին և ձգեալ յինքն ի բնութենե զանգուածոյս մերոյ։ Եւ Հրացեալ աստուածութեամբն ձեանա, ընդ նմի 100ալին ձեանա և աստուածութիւնն։ Եւ մնա ըստ իւրում բնութեանն անփոխաղբելի։ Եւ զորաւրինակ մարմինն խառնեալ ընդ Բանին եղե որ ինչ եր Բանն, և զմարմին լինելն ոչ կորոյս, այլ մնաց մարմինն ըստ ձեռյն և ըստ թանձրութեան բնութեանն։ Ըստ նմին աւրինակի և աստուածութիւնն, միացեալ ի մարմնի, եղե մարդ՝ առանց ապականացու կրից, և պահեաց զիւր անիմանալի բնութիւնն անպարազրելի և անփոխակելի։ Եւ այս ամենայն եղե գործակցութեամբ Հոգոյն։

**Անտեսանելին տեսանի:** Անտեսանելին Աստուած մարմնով տեսանի։

**Անշաշափելին շաշափի:** Անշաշափելին Աստուած ի Թաւմաէ շաշափի[ի] (Յովհ. ի 24-29):

**Անժամանակն Աստուած ծննդեամբ ի Կուսեն սկսանի:**

**Որդին Աստուծոյ Որդի մարդոյ լինի:**

Յիսուս Քրիստոս Երեկ [և այսար]: Որ ընդ Հաւր եր յառաջ քան զամենայն, որպես վկայէ Յովհաննես՝ «ի սկսանէ եր Բլանն» (Յովհ. Ա. 1), այսաւր ծննդեամբ ի Կուսեն։

**Նոյն [ինքն] և յափտեանս:** Նոյն Որդի ընդ Հաւր յաւիտեանս։

**Հերեայր գայթակղեսցին:** Դու մարդ ես և զանձն քո Աստուած [առնես] (Յովհ. Ժ. 33): Եւ քար գլորման լինի՝ ըստ Եսայիա, և վեմ գլայթակղութեան] (Հոռմ Թ. 33, հմմտ. Ա. Պետ. Բ. 8): Եւ ըստ Սիմեոնի. «Ահա սա կա ի գլորումն և ի կան[գնումն]» (Ղուկ. Բ. 34) |100թ|։

**Հերանոսք ծիծաղեսցին:** Զիւրեանց աստուածովքն պարտին ծիծաղել։

**Հերետիկոսք լեզուագարեսցեն<sup>1</sup>:** Արիոսեանքն և նմանք նոցա լեզուագարեալք այլ այլոյ։

Յայնժամ հաւատացեն յորժամ տեսցեն յերկինս Երթեալ։ Զոր ասեր Տէրն, թէ. «Ես նոյն եմ և ո՛չ փոփոխեցա» (Հմմտ. Մալ. Գ. 6): Եւ Հրեշտակը Հիանային ի տեսանելն զնա, և այլ բազում սքանչելիք և նշանք աստուածայինք։

**[Եւ Երե ոչ յայնժամ].** այլ յորժամ յերկնից եկեսցե։ Գալոց է Որդի մարդոյ բազում Հրեշտակաւք և այլն, և տեսանելոց եմք զնա որպես և են։ Եւ որ այլ այսպիսիք։

**[Եւ իբրև զդատաւոր նատցի].** Եւ այսորիկ յետո։ Ի ժամանակի իւրում քննեսցուք։

<sup>1</sup> Գրիգոր Աստվածաբանի ճառում (այսուհետև՝ ճառում)՝ լեզուագարեսցին, տես, Գիրք և ճառ հոգեշահ (այսուհետև անունը չենք նշում), էջ 8:

Բայց այժմ Աստուծոյ յայտնութեանս տան ե: Թէ պարտ ե վասնորոյ տաւնս ե և բանս զայս իմանալ:

Թանգի երևեցաւ Աստոած մարդ ի Կուսեն: Տեսանես, զի սուրբ վարդապետս զմարմնոյն երեռումն Աստուծոյ երեռումն ասե:

Որ երն [և միշտ է]: Խսկսքանէ եր Բանն և միշտ է ընդ Հաւր:

Ի միշտ է Են: Ի Հաւրե:

Առաևել քան զպատճառ և զ[բան]: Մարդկան բան ո'չ կարէ ճառել զհայրական ծնունդն, որպես Հրշտակք ո'չ գիտեն յառաջ քան զինքեանց լինելութիւնն, այլ մարմնական ծնունդս զմարմնականաց |101ա| փրկութեան պատճառ ունի:

Զի և ոչ է իսկ: Են որ են և ասին, և են որ չեն և ասին, և որ ե և ո'չ ասի:

Թան զբան զեր ի վերոյ: Զանցանե զմարդկան մտածութեամբք և զհրշտակց, այլ վասն փրկութեան մարդկան եղեալ զկնի:

Զի որ զինելն ետ: Իբրև զՀայր ստեղծ յիսկսքանն և իբրև զվարդապետ բարիոք գոլ ետ և շնորհե միշտ բարիոք գոլ ի միւսանգամ գալստեանն:

Մանաւանդ զցնեալս: Ի դրախտեն ցնդեաց չարն. առ նոյն հանցե մարմնանալովն:

Եւ անուն երևեցելոյն Աստուծոյ երևումն: Ո՛վ Արիոս, զանուն երեցելոյն Աստուծոյ «երեռումն» ասէ վարդապետս սուրբ, և դու զիա՞րդ համարձակիս հայՀոյել զԱստոած:

Այս է մեզ տանս, զայս տանեմբ: Ո՛չ որպես հեթանոսք սնոտաւք և դիւական պաշտամամբքն տաւնեն, և ո'չ որպես Հրեայն ըստ աւրինին և զոհիւք և մատուցմամբ ողջակիզաց, այլ որպես Աստուծոյ վայել և տաւնել հոգեռապես և ուրախանալ գալստեամբն Աստուծոյ առ մարդիկ: Եւ վարձս և փոխարենս զհատուցումն արդարոց առնուլ և ի վերին կայեանս վերանալ, ուր տաւնաւղացն և զուրածութիւն |101բ| մշտակա առաջի Աստուծոյ:

Թանգի այսպես ասել ընդանեգոյն ե: Ո՛չ հարթ ճանապարհ, այլ զառիվեր՝ յերկրէ ի յերկինս:

Զի զիին մարդն ի բաց դնելով. որ ինչ մեղացն ե տեսակ:

Զնորն սգենուցումբ: Զչարչարանսն Քրիստոսի սգենուցումք, զպահելն, զաշխատելն, զտքնելն, զաղաւթելն<sup>1</sup>:

Եւ որպես Աղամաւ մեռաք, նոյնպես Քրիստոսի կեցցուք: Յառաջին մարդոյն զանեծս ընդարձակք և ընդ մահուամբ գրաւեցաք: Ի ձեռն Քրիստոսի մարդեղութեանս ազատեցաք և որդիք Աստուծոյ անուանեցաք:

Ընդ Քրիստոսի[ս] ծնեալք: Աւազանաւն:

<sup>1</sup> Նախ՝ զաշխատելն, ապա սրբօք՝ զաղաւթելն:

**Եւ խաչակիցը լեալր]: Առաքինի վարաւք:**

Ընդ մին թաղեապք և ընդ նմին յար[ուցեալր]: Խորհրդաբար քահանայն խաչանման արկանե գեղն աւծութեան յաւագանն՝ զչարչարանսն Քրիստոսի նշանակելով: Եւ զմանուկն երիս հետս ընդդմելով ի ջուրն՝ գերեքաւրեա զմաղումն նշանակեա:

Թանգի պարտ ե ինձ կրել զգեղեցիկ [անդրէն դարձումն]: Ինձ ասելով՝ զնախահայրն ասե, որ վերստին չնորհեցաւ զոր յառաջագոյն կորոյս:

Եւ զորարինակ ի բաղրագունիցն եկին տրտմակ[անքն] |102ա|: Ի ձեռն ճաշակման պտղոյն զտրտմութեան ծնունդն և զքիրտն երեսացն:

Նոյնպես ի տրտմականացն ի վեր [ելանել ի բաղրագոյնսն]: Որում արժանացան սուրբքն և մտին ի քաղցրագոյն առագաստն:

Զի ուր առաւել եղենս են մեղքն, առաւել եղեն շնորհքն]: Ի ձեռն չարին մեղքն, ի ձեռն Քրիստոսի թողաւ, և չնորհաւք ապրեցաք:

Եւ եթե ծաշակումն դատապարտեաց [որչափ առաւել ևս Քրիստոսի չարչարանքն արդարացուցին]: Մեկնողաւրեն ասե, զի որ չարչարի և խաչակից լինի Քրիստոսի, արդարանա:

Արդ այսուհետև տաւմեսցոր: Դարձեալ՝ ի խրատ դարձուցանե զբանն:

Մի՛ աշխարհապես: Որք տաւնեն զպատերազմաց յաղթութիւն և զառումն քաղաքաց և զմանգանց լինելութիւն, զամաց լիութիւն, զհարսանիս:

Այլ աստուածաբարա՛ր: Անմարմնապես զամենայն առաքինութիւնս կատարել:

Մի՛ զմերս, այլ որ ինչ յաղագս մեր: Մեր կերակուր և ըմբելի և հեշտութիւն քնոյ, իսկ վասն մեր՝ անսուաղութիւն, քրտունք և աղաւթք:

Մանաւանդ թե՝ որ Տեառնն է: Չարչարանք և նեղութիւնք, որպես ասե Պաւղոս. «Հնում զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի ի մարմնի իմում» (Կող. Ա. 24):

Մի՛ զտկարութեանս, այլ զբժշկութեանս: Մի՛ զհեշտութեանց, որ |102բ|ով չիւանդացաքն:

Մի՛ զտեղծուած[ոյս], այլ զվերին ստեղծուած[ոյն]: Մի՛ զոր խնդրե մարմինս, այլ զչարչարանս մարմնոյն, զայն, որով վերստին նորոգեցաք:

Մի՛ զնախադրունս պսակնեցոր: Զոր յառաջ սկսաւ, կտրեաց զոճ բանին առ զայրոյց<sup>1</sup> սրտին, վասն զի մարմնապես տաւնէին, զարդարէին զնախադրունս քաղաքին դիպակովք և կերպասովք և մետակս առաջս սփոէին ի փողոցսն, որոց պարտ եր զսպայարանս հոգոյ և մարմնոյ պասկել արդարութեամբք:

<sup>1</sup> Զայրոյք (°):

**Մի՛ զակն պարարեցուք: Գունոյ վայելջութիւն զակն պարարեն, իսկ սուրբ խորհուրդք զմիտս պարարեն, որ է Հոգոյ ակն:**

**Մի՛ զլսելիս հեշտացուցուք: Խեղկատակութեամբ և պոռնկական երգովք հեշտացուցանէին, որոց պարտ եր հեշտանալ աստուածային պատուիրանաւըն:**

**ՄԵՐ զձաշակելիս] պոռնկեցուացուք: Որպես պոռնկութիւն է աւելորդ ամուս-նութիւնն, նոյնպես պոռնկութիւն ճաշակելեացն աւելորդ ուտելն և ըմբեկն:**

## **Մի՛ սգեստիւր խենեշասցուր:**

*Մի՛ պալծառ բարամբը: Մի՛ ոսկե քար[ամբք]:*

Մի՛ սուտ պածոլձեալ գունովք, որ կանալք հնարին:

Չար սերմանցն չար երկրագործութիւնն]: Ի սերմանցն պատշաճ համարեցաւ աւրինակ տալ: Երկրագործութիւնն մի է, բայց որոմս սերմանեալ ցորեան ո՛չ հնձեք: Բերան մի է, որ երգե զերգս աստուածայինս և խաւսի զխեղկատակութիւն: Առն և կնոչ գործ մի ե, բայց առն շնացողք չար սերմանս բուսուցանեն:

**Մի՛ բազմականս բարձրս [կազմեսցով խորան առնել որովայնի գժայթքեալն]:**

## **Մի՛ պատուեսցուք զծաղկահոտ գինին:**

Մի՛ երկիր և ծով զպատուականն: Երկիր՝ զպտուզս, ծով՝ զձկումս, աւդ՝ զթռչումս:

**Մի՛ այլ այլում, շռայլութեամբ յաղթել փութասցուք]: Պատուզքն և ար-ըեցութեամբ և մրցելով:**

**Զայտոսիկ հեթանոսացն:** Յանդիմանէ նոսա, թե Հեթանոսաց ե այս

Եւ որոյ այսաւը է տանիս: Եւ եթե ծնաւ ի Բեդղէմ և ի սրի եղաւ և յԵ-

տոս փախեաւ, և որ այլ ևս չարչարանք ի հրէիցն:

Եւ եթե ախորժնքը: Բազում էին, որ ըստ ակամք Հայէին: Բարիոք ձեզ կոչեցելոց: Հեթանոսաց կոչաւքն տաւնից և գիներբուաց ո'չ բարիոք, այլ և թատերք խաղից<sup>1</sup>: Պատուասիրաբար, որպես ծառա Տեառն. և ոռակա առահերթը մասսակարէ սպառա ոռեն:

---

<sup>1</sup> *Upper `hūnha:*

Զի աշրդ, կարող է կերակրել [աւտարս զգաւառականսդ և գրադաքացի մի վայրաբնակս]: Աւտար կոչե զինքն ի փիլիսոփայական ուսմանե:

Եւ որոց սեփական է պայծառութիւն աղքատս [և անտունս]: Սեփական կոչե նոցա զիմաստութիւն, իսկ իւրն մուրածաց բանս: Այլև յանդիմանե զնոսա ոսկեձեղուն և գումբեթաձե տաճարաւքն:

Եւ սկսանիմ աստի: Յանդիմանելով զնոսայ զոճ բանին կտրեաց: Արդ՝ կամի աստուածաբանել մակձայնութեամբ:

Բայց ինձ մարքեցեք զմիտս և [զլելիս]: Յամենայն աղտեղի խորհրդոց, որք միանգամ գուարճանայրդ յայտուիկ, յոլովք էին ի բազմականսն ի հեթանոսաց, որք ո՛չ գուարճանային:

Խրախացեալք, որ ո՛չն թափի: Մարմնական կերակուրք ապականին և թափին |104ա|, իսկ հոգեորն նույն ինքն լցեալ: Մարմնոյ կերակուրք ուռուցանեն և մեղկեն, իսկ հոգով լցեալն առաւել ևս սգաստանայ:

Համարատագոյն սակաւ բանս ասացից և իբրև բազում բանիւք լցից զմիրտս ձեր:

Եւ մի տաղտկութեամբ թախսծիեալ<sup>1</sup> ընդ յագ[եցումն]: Բազում բանս ո՛չ ասեմ, զի մի՛ ծանրանայցեն լսելիք ձեր, զի առաւելութիւն բանից:

Աստուած եր միշտ: Յանցեալն:

Եւ է: Ի ներկայս:

Եւ եղիցի: Յապառնիսն:

Վասնգի և երն միշտ: Երն և եղիցի ըստ մեզ ժամանակի հատածքեն [իոսանուտք բնութեանս]: Եր Արքահամ և եղեւ իսահակ:

Որ ե[ր]ն [միշտ]: Զայս ասաց ընդ Մուսես անուն ինքեան:

Բաւանդակ ինքեամբ ի միասին [առեալ]: Որ են, զերն, և զեղին և ունի զանսկիսքն և զանվախճան:

Իբրև զի խոր իմն անբաւ են սահմանք [բնութեան քան զամենայն միտս գերազանցել]: Զի մին յաւել վասն անբաւ խորութեան և քան զհրշտակաց միտս գերազանցեալ և զմարդկան:

Եւ քան զժամանակ և զբնութիւն: Ժամանակ և բնութիւն՝ ի նմանէ եղեալ, ո՛չ կարեն հասու լինել:

Մտար միայն նկարագրեալ: Նկարագրեն գրիչք, և ո՛չ երկի՛ մա՞րդ իցէ, թե՞՞ թռչուն:

Եւ այսորիկ յոյժ աղաւտ և չափաւոր[ապիս]: Երկեցաւ Մաւսեսի տեսիլ հրոյ, եսայիայ՝ աթոռ փառաց, |104թ| եղեկիելի՝ կառս: Այլ ո՛չ ե ինքն այս: Այլ յաղագս խորոցն, զի տեսանել կարասցեն:

<sup>1</sup> Նախ՝ թաղծեալ, ապա լուսանցքում սոբօք:՝ թախծեալ:

Այլ յայլմէ երևմանցն ժողովելոց ի մի իմն [ձշմարտութեանն կերպարան]: Որ նախրան զունելն ձողաւարեն: Որպես չէ՛ ոք արեգական գիրկս կամ արկ իցի աճել կամ զհողմ բռնել ջանա:

Այսքան պայծառացուցանէ զմեր զիշխանականս: Զմիտս:

Եւ այս զմարքելոցն: ԶՄովսեսին, զԵսայիշայն, զԵղեկիելին:

Որրան զաշս փայլատականաց երագլութիւն ո՛չ կացելոց: Որպես փայլատական տեսութիւն զթափ անցանի յաչաց, ևս առաւել աստուածային տեսութիւնն:

Ինձ թոփ, զի ըմբռնմամբն ձգեսցէ առ ինքնն]: Որ մանդան գեղեցիկ իրս երկեցուցանե, զի ի հետ ձգեսցեն և կամ ի գիրկս ամբարձցեն: Այսպես առնե զտեսիլսն և անփոփե, քանզի ամենեին անհասանելին երկմամբն յոյս տայ և անփոփելովն անհասութիւն ցուցանե, զի զհետ ընթասցին: Եւ յորժամ փափաքեն սրբեն զանձինս, վասն զի սրբոց երկի Աստուած և ի սուրբս բնակե և առնէ նմանս իւր:

Այնքան հաւասարապես, որրան ձանաչէ [զծանուցեալսն]: Ի հանդերձելումն յանդիման տեսանեն՝ որպես ասե Պաւղոս (Ա. Կոր. ԺԳ 12):

Արդ անրաւ է աստուածութիւնն: Ո՛չ տեղեաւ պարագրի և ընդ չափովք անկանի |105ա|:

Եւ նույն ամենայն ուստեր հասանելի [ինքեան]: Ինքն ինքեան երրորդութիւնն ամենայն ուստեք հասանելի է՛ որպես Փրկիչն ասեր. «Ոչ ոք գիտէ զՀայր, եթե ոչ Որդի» (Մատթ. ԺԱ 27), և “Ես և Հայր իմ մի եմք» (Յովհ. Ժ 30): Նոյնպես Հոգին, զՀայր և զՈրդի, և .Գ. Անձնաւորութիւն ընդ միմեանս:

Թեպետ և թուի ումեր պարզաւագունի լեալ բնութեանն]: Զայտ դեռ խնդրեմք, քանզի և ո՛չ այս և բնութիւն նորա պարզ, ըստ որում և ո՛չ որ ի բազմացն են գոյացեալ մի մարդիկ և անասունք:

Եւ երկդիմի անբաւութիւնն տեսանի: Յերն և յԵղիցին անսկզբնութեամք և անբաւ և անկատարած գոլով, զի առաւել քան զայսոսիկ: Անսկիսբն ասել և անկատարած, զի ի սոսին ո՛չ և անբաւն:

Յորժամ ի վերին խորսն միտրն հալին, ո՛չ ունին ուր դադարեն և հաստատեսիմ յաղագս Աստուծոյ երևմանցն: Զի յայնմ վայրի անբաւութիւնն է:

Եւ զանանցանելին անսկիսբն անուանեաց: Հրշտակք անանցանելի են, այլ սկիզբն ունին՝ յԱստուծոյ եղեալք: Իսկ Աստուած, ասնկիսբն գոլով, գերազանց է քան զՀրշտակաց գիտութիւն: Եւ ո՛չ բաւեն գիտել զբնութիւն աստուածութեանն, զի ի նմանե են եղեալք:

Դարձեալ՝ զանանցանելին ան[սկիզբն]: Յորժամ ի վերին խորսն միտքն նկրտեցաւ և ո՛չ կարաց անցան|105բ|ել հասողութեամք:

Անսկիսան անուանեաց: Եւ յորժամ ի ստորինս և որ ի կարգիս ե [անմահ և անապական]: Եւ յորժամ ի մարդիկ համեմատես անմահ և անապական:

Եւ յորժամ ի միասին առնուցուս զամենայն [յափտենական]: Զանսկիզբն և զանվախճանն և զանմահն և զանապականն: Զայսոսիկ ունելով՝ յաւիտենական ասի:

Վասն զի յափտենանն ո՞չ ժամանակ և ո՞չ ժամանական մասնի ինչ, զի և ո՞չ չափելի է]: Ժամանակ յերիս բաժանի՝ յանցեալն, ի ներկայս և յապառնին, իսկ յաւիտենանն ո՞չ ընդ թուաւք անդանի:

Որպես է մեր ժամանակ արեգական թերմամբ չափեալ: Թե՝ “Աղամ եկաց ամս .ՁԼ., Նոյ՝ .ՁԾԵ.: Իսկ հրշտակք ո՞չ այսպես. թեպետ և սկիսքն ունին, այլ անանցանելի են՝ երկարածգեալ ընդ Երրորդութիւննեն:

Դատապարտիցիմք .Բ. ասել կամ .Ա.՝ որպես հրեայլք]:

Չարն յերկոսինն մտանե, բազումս ասել իբրև զհեթանոսս կամ մի՛ իբրև զհրեայն: Երիս սրբասացութիւնն և մի տերութիւնն և մի աստուածութիւնն՝ որպես այլ ումեմն նախ իմաստափրեցաւ Եսայիհաս:

Եւ զի ո՞չ եր բաւական բարերարութեանն այսր շարժել զիւր զգիտութիւնն<sup>1</sup>: Ո՞չ պարտ վարկաւ Երրորդութեանն միայն գիտել զմիմեանս և փառաւորիլ ի միմեանց, այլ կամեցաւ արարածս առնել՝ զփառաւորեսց/10-նախն զԱրարիչն, թեպետ անկարաւտ եր յամենայնե:

Այլ պարտ էր հեղուլ զբարիսն և ճանապարհորդել]: Արարածս առնել, զի փառս զստ//թ: Եւ ճանապարհորդել գիտել արարած այս զԱրարիչն և նմանել բարերարութեանն և մարդասիրութեանն:

Եւ միայն ունել ի բարիսն շարժումն, որ առ Աստուած ե: Բարերարութիւնն և մարդասիրութիւնն: Եւ յառաջին զԱստուծոյ առեալսն բարերարութիւնն և զմարդասիրութիւնն:

Որ յալագս պայծառութեանն արուսեակ խաւար վասն [ամենակն բառնալոյն լիալ և ասացեալ]: Ի ներքոյ եր քան զհրշկապետս և զայլ դասս, ի մեջ հրշտակաց եր, վասն որոյ ասի հրաման ետ վարսաւոր քերոբէին ընգենուլ զնայ ի միջոյ հրեղեն վիմացն:

Ի բարոյն փաղել և չար լինել: Փոքր բանիւս իմով զմեծամեծս Աստուծոյ առնել:

Եւ վասն զի առաջինն զեղեցկապես ուներ [նմա]: Իմանալի աշխարհն և հրեշտակք:

Երկրորդ զմտառ ածէր աշխարհ նիւթական և տեսանելի]: Գալ ի աշխարհ ի չորից նիւթոց:

<sup>1</sup> ճառում՝ զտեսություն, էջ 15:

<sup>2</sup> Անընթեռնելի է:

Եւ այս է յերկնէ և յերկրէ և որ ի մեջս են [իաստատութեամբ]: Երկիր և ջուր և ի միասին խառնումն չորից տարերցս, երկրի և ջրոյ, աւդոյ և հրոյ: Երկիր ցուրտ և ցամաք, ջուր ցուրտ և խոնաւ, աւդ խնաւ և զերմ, Հուր ջերմ և ցամաք: |106թ| Դարձեալ՝ ունին և այլ երկուս որակութիւնս. երկիր՝ խիտ և չոր, ջուր՝ բութ և գեղ, աւդ խիտ և շարժուն, խտութեամբ ընդ ջրոյ միաբանեալ և շարժութեամբ ընդ հրոյ: Հուր սուր և անգայտ: Եւ դարձեալ՝ այլ որակ. երկիր ծանր և անշարժ, ջուր՝ ծանր և շարժուն, աւդ՝ թեթև և շարժուն, հուր՝ սուր և թեթև, և խառնեալ են այսպես: Երկիր ցամաքութեամբ ընդ հրոյ, իսկ ցրտութեամբ ընդ ջրոյ: Ջուր ցրտութեամբ ընդ երկրի, իսկ խոնաւութեամբ ընդ աւդոյ: Աւդ խոնաւութեամբ ընդ ջրոյ, իսկ ջերմութեամբ ընդ հրոյ: Դարձեալ՝ ըստ մակդարձութեան և կամ բեկութեամբ այսպես միաբանեալ են. Հուր՝ ջերմ և ցամաք, ջերմութեամբ ընդ աւդոյ միաբանեալ, իսկ ցամաքութեամբ՝ ընդ երկիր: Աւդ խիտ և շարժուն, խտութեամբ ընդ ջրոյ միաբանեալ և շարժութեամբ՝ ընդ հրոյ: Ջուր ծանր և շարժուն, շարժութեամբ ընդ աւդոյ միաբանեալ և ծանրութեամբ՝ ընդ երկրի:

Գովելի ըստ իւրաքանչիր բարի բնութեամբ: Հուր՝ ջեռուցանելովն, աւդ՝ տածելովն, ջուր՝ զովացուցանելովն, երկիր՝ բուսովք:

Յամենեցունց յարմարութեանց և ձայնակցութեանց: Իբր աղիք երգոց թոյլ և պինդ գոլով |107ա|, այնպես յարմարեալ են ծանրն ընդ թեթևին, և խոնաւն ընդ թեթևին և խոնաւն ընդ չորին, սուրն բժին և անգայտն խտին:

Այլ առ այլ գեղեցիկապես կալեար: Ծայրքն զմիմեանս կալեալ են, որպես արք երկու ի խոնարհ կալով և ի բարձրութեան, ձեռս տուեալ՝ պնդեն զմիմեանս: Այսպես, հուր թեթևութեամբ և սրութեամբ բուռն հարեալ զժանտութենե երկրի և զանշարժութենե, և աւդ ջերմութեամբ կալեալ զցրտութիւն և ջուր խոնաւութեամբ կալեալ զցամաքութիւն երկրի:

Զի ցուցե թե ոչ միայն ընդանի իւր բնութիւն: Զհրշտակս:

Այլև զամենեին աւտարացեալս: Զգալիս ընդանի աստուածութեան և իմանալի բնութեան: Ասաց, թե այլ է բնութիւն հրշտակաց և այլ հրշտակապետաց, այլ աթոռոցն և այլ տերութեանցն, այլ սերովքէիցն և այլ քերոբէիցն, և որպես տեղեաւ գատուցեալ նոյնպես և բնութեամբ:

Արդ՝ միտք և սգայութիւնն ի միմեանց բաժանեալք: Հրշտակականն և անասնայինն, և ո՛չ ամեն առատաբար, զի մարդն չեր եղեալ: Եւ ի նիւթ առնլու զմար[դն]: Ի չորից տարերցս, զորս յառաջին աւուրն գոյացոյց:

Հրշտակ՝ այլ երկրպագելի լիսոն: Յանասնոց և յայլոց հնագանդելոց խառն յիմանալոյն և ի սգալոյն:

Տես |107թ| աւդ երևելի արարածոյս: Եւ ի խորհուրդ եկեալ [իմանարյն]: Մտաւորութեամբն:

**Մարմին** վասն ամբարնալոյն]: Զի պատուիրանապայութեամբն անմահ մնասցէ ընդ հոգոյն: Եւ կամ զի մի մեծս ամբարձցի հպարտութեամբ, այլ հայելով՝ ի մարմինն խոնարհեսցի:

Եւ իովի յաղագս շնորհին: Անմահ է հոգին և կամ թե ամենայն պարզեացն Աստուծոյ և շնորհացն հոգին է ընդունիչ՝ ըստ պատկերի Աստուծոյ եղեալ:

Առ Աստուած հայելովն աստուածամալ: Որպես Մովսես:

Աստանաւր ծառագայթք ձշմարտութեանն Աստուծոյ տեսանել և կրել արժանապես:

Զսա եղ ի դրախտին, զի՞նչ [որ երթեր եր դրախտն]: .Բ. տեսակք են դրախտին, զինչ և կամե քո առցես. թաւ վայր անապական պտ[ղ]ով լցեալ: Դարձեալ՝ դրախտ առաքինութիւնք, խոհեմութիւն, որ պատուականն է և արիութիւն, որ քաջավատահութիւն և ողջախոհութիւն և արդարութիւն, որ է բոլոր անձինն ազատականութիւն:

Ինքն իշխանութեամբ [պատուեալ]: Այնչափ վայելուչ զինքն իշխանն զկերպարանն իւր ներգողին նմա գործել զառաքինութիւնսն:

Զի իցէ առողին բարին ո՛չ ինչ նուազ [քան զտուղին սերմանս]: Սերմանք պատուիրանն: Զի գործեսց զառաքինութիւն, որք են անմահ տունկք |10-8ա| տացե զպտուղ զ.ձ.աւորն:

Աստուածամին խորիրդոցն: Աստուածային կամացն:

Թերես արդեաւր պարզագունիցն [և կատարելազունիցն]: Թուի ինձ, թէ առաքինութեանցն, որք պարզագոյնք վասն անմարմնութեանն: Գործել զնա և պահել: Եւ գործեաց փարիսեցին, այլ ո՛չ պահեաց: Աբրահամ գործեաց և պահեաց. «Առից ջուր լուասցեն զոտս ձեր» (Ծննդ. ԺՀ 4): Մեկնէ:

Տեսութիւն եր տունկն որպես [իմ տեսութիւնս]: Գիտութիւն եր, որպես իմ զիտութիւնս: Զմաշկեղենս սգեն զմեռելութիւն, զմաշկանացու մարմինս, և զընդդիմահարն ընդդիմահարե մարմինս, աստուածային կամացն և զիտութեան, և զճառագայթս շնորհաց նորա ո՛չ թողու ի ներքս, զի մարմին ցանգա հակառակ հոգոյն:

Եւ տա աւրենս՝ [նիսթ ինքն իշխանութիւն]: .Դ. աւրենք, այլ թե .Զ. բնական աւրենք: Եւ դրական զոր եղ Աղամայ և զրական (՝), չորրորդ աւետարանականս: Եւ առաքեալ ասէ. «Գիտեմ այլ աւրենսս, զինեալ յանդամս իմ» (Հմմտ. Հոռմ. Զ 23): Եւ դարձեալ՝ «Գերել զիս աւրինաւքն մեղաց» (Հմմտ. Հոռմ. Զ 23):

Եւ զմաշկեղենն սգենուլ [պատմուձանն]: Մաշկ ընդդիմահարել ուսոյ և անմասն ի ճարպոյ և յուկերաց, որով շըջի կենդանի:

Եւ զառաջինն զիտելով զիւր [ամարս, յԱստուծոյ թազի]: Ասելն՝ «Լուազայն քո [ի] դրախտին» (Ծննդ. Գ 10):

**Շահի իմն ստանար<sup>1</sup> զմահն:** |108թ| Եւ եղկ մարդասիրութիւն պատուհասն, զի թե ո՞չ եր ճաշակել զմահն, անմահացեալ եր, որպես զչարն: Բայց ի ձեռն մահուն ընդալաւ յետոյ գիրկութիւն՝ ի ձեռն մարմնանալոյն Փրկչին:

**Բազմաւր խրատեցաւ յետոյ փոխանակ յոլվագունից մեղացն:** Զոր ինչ յետոյ ի ժամանակս ժամանակս ազգ մարդկան ըստ չարին սերմանց զոր ի ձեռն աւձին սերմանեաց առ կինն գործովք և ազգ ազգի մեղանաւք վարեցաւ մինչև կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյ, և ըստ մեղանացն ընդալաք և զիրատս յԱրարչեն՝ ըստ իւրաքանչիւր պատճառաց:

**Բանիւ:** Որպես առ նոյիւ սպառնայր զարկածս ջրհեղեղին:

**Աւրինաւր:** Մովսեսին և մարդարէիցն:

**Բարեգործութեամբ:** Զի եր երբեմն, որ սպառնայր և ետ, զի բարեգործ եր, որպես դարձն ժողովրդեանն:

**Սպառնալինաւր, հարոածաւր:** Ամենայն պատիժքն առ հրեայս և հեթանոսս:

**Զրովք:** Զրհեղեղն առ նոյիւ:

**Հրկիզութեամբ:** Առ սողոմացիսն:

**Պատերազմաւ:** Առ թեսուաւ և Դաւթիւ:

**Յաղթութեամբ, պարտութեամբ:** Զի եր ազգ, որ յաղթեր և եր որ պարտեր, որպես առ Ելիոնի պատերազմ:

**Նշանաւր յերկնալին:** Առ թեսուաւ և Եղեկիայիւ՝ դարձ արեգականն |109ա|:

**Յաւղոց:** Հարուածք կարկտին:

**Յերկրեն:** Շարժմամբ և այլք:

**Ի ծովե:** Վրդովմամբք ալեացն:

**Արանց:** Զոմանս խրատեաց, զոմանս պատուեաց, որպես զԱբրահամ:

**Ազանց:** Զամենայն ազգ:

**Քաղաքաց:** Սողոմաեցոցն:

**Անյուայի փոփոխմամբբ:** Ելիցն Եգիպտոսի և որ ինչ հրաշագործեցաւ յԱստուծոյ:

**Որով խորտակեալ [զարութիւնն եր փութացեալ կատարած]:** Զի այսպիսի զանազան հարուածովք և կամ բարոգործութեամբք ո՞չ ուղղեցաւ ազգ մարդկան և ո՞չ աւրինաւք և ո՞չ մարդարէիւք, մինչև ինքն Արարիչն կատարած արար գալստեամբն իւրով:

**Մարմնովն ամբառնալ:** Նախ գիտէ Աստուած ի հոգոյ և ի մարմնոյ արար զմարդն, զի մի ամբարտաւնեցե: Գիտեր նախգիտութեամբն, եթե սատանա անբարտավանելոց եր:

<sup>1</sup> ճառում՝ և աստանաւր, էջ 20:

Խակաբանն սկիսքն: *Սկիսքնեան սկսքնութեամբ Հայր Որդոյ և Հոգոյ Սրբոյ: Եւ Որդի իմաստութիւն Հաւը, կերպարան սկսքանտպին. “Որ ետես ինձ, ետես զՀայր” (Ղուկ. ԺԴ 9):*

*Շարժեցեալ կնիր: Թագաւորաց կնիք շարժեցեալ ո՛չ բերեն զնոյն կերպարան, իսկ Բանն Աստուած մարդեղեալ մնաց ի նոյնութեանն, քանզի այլայլութիւն և փոփոխումն յԱստուած ո՛չ է, այս մարդկան է՝ լինելութիւն, ապականութիւն, աճել(ութիւն), |109թ| նուազութիւն, այլայլութիւն, ըստ տեղոյ փոփոխութիւն:*

*Անփոփոխելի պատկեր: Թագաւորացն պատկերք փոփոխին մոմովքն, իսկ Որդի՝ պատկեր Հաւը, թեպետ և մարդ եղեւ, անփոփոխելի մնաց Աստուածութեամբն:*

Հաւը սահման և բան: *Մարդ սահմանի կենդանի և բանական գոլով: Իսկ ուր Որդի, անդ Հայր սահմանի և ուր Հայր՝ անդ Որդի:*

Յիւր կերպարանն զա: *Մտացն և հոգոյ միջնորդ գոլով՝ միացուցանե զմարմինն ընդ աստուածութեանն:*

*Մարրեցելոյ Հոգովն: Հոգին Սուրբ մաքրեաց և տաճարացոյց զԿոյսն սուրբ՝ ըստ ձայնի հրշտակապետին:*

Քանզի պարտ և արժան եր ծնրնդեանն պատիւ ընդունել: *Անպատուեալ ծնունդն ասելովն եւայի. «Յաւաւք և տրտմութեամբ ծնցիս որդիս» (Ծննդ. Գ 16): Ծնաւ առանց ցաւոց և երկանց ըստ Եսայի մարդարեութեանն. «Յառաջ քան զծնանելն, որ երկներն» (Հմմտ. Ես. ԻԶ 17): Յառաջ քան զելանելն ցաւոց երկանցն:*

Եւ կուտրեանց ե նախապատութիւն: *Անպատուեալ լինին կուսանքն և անորդիք: Ծնանելով ի Կուսե՝ յառաջապատիւ արար զկուսութիւն:*

Ով նոր խառնմանն: *Ո՛չ որպես տստերքս խառնեցան և ո՛չ որպես ջուր ի գինի և կամ կաթն ի ջուր, զի սոքա լուծանին, այլ մարմինն ո՛չ լուծաւ յաստուածութիւնն |110ա|: Վասն զի եկաց մնաց յատուկ բնութիւն մարդկութեանն՝ միացեալ ընդ բնութեան աստուածութեանն, վասն զի որ զհուր յերկաթոյ և ի քարէ անորոշելի արար և սգերազանց, որպես ինքն կամեցաւ խառնեաց զբնութիւն մարդկութեանն ընդ բնութեան աստուածութեանն:*

*Միջոցաւ հոգոյն [աստուածութեանն]: Միտքն և հոգին աստուածութեանն միջնորդ եղեւ և մարմնոյն:*

*Թափի յիւրմէ փառացն: Առ զ.Լ.Գ. ամն:*

Որ քան յայնժամ ի վեհագունեն ետ]: *Փչումն նոր է միտքն՝ կերպարանն Աստուածոյ ընդ որս կացինն և մնացին: Ընդ հրշտակս, որ կացինն ի բարիոջն, զբարեկամսն զհրշտակային զաւրութիւնսն, փեսաւեր Յովհաննես:*

Յաղագս ի վայր կորացեալ քան[անացոյ հոգոյն խոնարիի]: .Բ. Կանայս ընդ մի յիշե գ.ՀԺ.ամեա կարկամեալն և գքանանացին: Բնութիւն մարդ-կան այնպես կարկամեալ ի վայր նաեր, քանզի առաքեցաւ վասն մարդա-նալոյն, ասի, զոր առաքեաց և սրբեաց, այլ ի Հաւրէ աստուածութեամբն անմեկնելի մնաց:

Քանզի [առաքեցաւ՝ այլ իրրև զմարդ զի կրկին եր: Աստուած և մարդ:

Երկեաւ: Ի ժամ խաչին քրտինքն ոլոռն վիճէին:

Եւ իրրև սկիսրն զանժամ[անական պատոն]: Հայր սկիզբն, այլ՝ անժամանակ և անմիջելի:

Եւ զի մի՛ թուեսցի թնդեմ Աստուծոյ: Վասն այնը ասի. «Առաքեաց զիս Հայր» (Յովկ. Զ 58), և եթե. «Հայր իմ մեծ է քան զիս» (Յովկ. ԺԴ 28) |110թ|:

Ըստ որում և մատնեալ ասի: Եսայի ասե. «Տէր մատնեաց զնա առ ձեռու<sup>1</sup> մեր» (Հմմտ. Ես. ԾԳ 6):

Այլև ինքն զինքն մատնեաց: «Զո՞յ խնդրեք: Ասեն՝ զթիսուս: Ասե. Ես եմ» (Հմմտ. Յովկ. ԺԸ 6): «Եթե զիս խնդրեք, թողեք զդոցա երթալ» (Հմմտ. Յովկ. ԺԸ 8):

Գրեալ ե: Յարուցից իջաւ զոր Աստուած յարոյց ի մեռելոց և աջովն Աստուծոյ բարձրացեալ: Այլ և ինքն զինքն յարոյց՝ «Անձամբ իմով զնեմ զանձն և առնում զսա» (Յովկ. Ժ 17): Եւ ինքն վերանայր յերկինս. «Եւ ամբ կալաւ զնա յաչաց նոցա» (Գործ. Ա. 9):

Յոմանց իրրև զԱստուած պատուի և ժողովի<sup>2</sup>: Ի Սաբելէ Լիբե[ացոյ]:

Եւ ի կիսոց իրրև մարմին [անպատուի և բաժանի]: ՅԱրիոսէ:

Նոցա բարժանեալ պարտ եր: Սաբելի բարժանել պարտ եր յերիս Ան-ձինս և ի մի աստուածութիւն, քանզի ասեր Սաբել մի դեմս խառնեալ ընդ միմեանս և անուանադներ միայն երիս, այլ ո՛չ յանձինս յատուկ: Եւ սոցա միաւորել արիոսանցն, քանզի ասէին զՈրդի կրտսեր քան զՀայր, և զՀոգի նոազ քան զՈրդի՝ որչափ աղաւնի քան զմարդ:

Գայրազգե<sup>3</sup> մարմնովն, զայր [Ա] իրեալրն: Ասեն՝ «Դու մարդ ես և զանձին քո Աստուած առնես» (Յովկ. Ժ 33):

Նորա զորդոյն կոչումն զուգապատութեալն [ձայն իմացան]: Զոր բար-բառեցաւն Հայր ի վերայ Յորդանան գետոյ. «Դա ե» (Մատթ. Գ 17):

Փորք ինչ յետոյ տեսցես զՅիսուս սրբեալ: Յետ .ԲԺ. աւուր մկրտու-թեամբն իւրով:

<sup>1</sup> Վերն ընթերնելի՝ առ մեղս մեր:

<sup>2</sup> ճառում՝ օծանի, էջ 24:

<sup>3</sup> ճառում՝ գայթակղի՞ս, էջ 24:

Ծանիր իրրև եզն գտածիչ իւր Եսահաս իրաման քեզ, և իրրև էշ զմտուր Տեառն իւրոյ]: |111ա| Իշոյ և եզն զՀրեայս և զՀեթանոսս նմանեցուցանե:

Եթե Յեղիպտոս փախիցէ լաւժարութեամբ փախիր ընդ նմայ: Եղիպտոս նեղիչ թարգմանի: Յաւժարութեամբ: Համբերեսցես ի նեղութիւնս վասն Քրիստոսի: .Ե. ամ եկաց ի Հերմոյպաւլիս քաղաք զոր չինեալ եր Մովսեսի:

Զգեղեցկապես անդ երկրպագելալի: Յեղիպտոս գեղեցկապես երկրպագեցաւ ուղղափառութեամբ, զի Պետրոս և Աթանաս անդ էին և այլք ի սրբոց ճգնաւորացն:

Ի բաց բարձ, որ ի ծննդենեն [ծածկոյթն եր]: Ջմեղս զաստուածավաճառս ի բաց, յետ մկրտութեանն սակաւ ինչ աւուրբք Տէր մեր զսեղանս հատավաճառացն ցրուեաց և զաղաւնավաճառսն եհան ի տաճարեն: Դո՛ւ՝ զարիանոսս զաստուածավաճառսն և որք զանմտութիւն գնեն և վաճառեն հան ի տաճարեն Աստուծոյ:

Թարկոծեցիր: Ի նազարեթ քարինս առեալ զհետ մտին և հանեալ զնայար[տաքսյ]՝:

Պատկառէ ի բումէ լրութենեդ: Առաջի Հերոդէ ի լուռ եկաց, զի չեր ինչ աւկտելոց: Պատկառեն իշխանք ի սակաւ բանից քան ի լեզուազարաց:

Եթե մտրակեսցիս: «Եթե հարկանե ոք զծնաւտ քո մատոյ զմ[իւսն]» (Հմմտ. Ղուկ. Զ 29): Լնում զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի:

Փշար պսակնելցիր խոշորագունիւր ըստ Աստուծոյ վարությ: Խոշորագոյն և անբ///տ վարս |111բ| ստացիր ըստ Աստուծոյ կամացն:

Ընկա՞լ զեղեգն: Եղեգն եղին ի ձեռինն գրել զինքեանս տարագիր և զՀեթանոսս յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի:

Կատարած, խաչակի՞ց լիր: Կատարած նմանութեանցն զայս արա, չարչարակից լեր և մահակից, զի եթե չարչարանացն կցորդ լինիմք և փառացն և տեսեալն որ Երրորդութիւն. «Այժմ տեսանեմք իբրև հայելի աւրինակաւ այլ յայնժամ դեմ հանդիման» (Ա. Կոր. Ժ 4 12): Այժմ խելամուտ եմ փոքրիշատէ, այլ յայնժամ գիտացիս որպես:

Եւ կամ տեսեալն որ Երրորդութիւն, որ խաչակից լինի և այլն: Լնդ Երրորդութիւնն թագաւորեալ երկրպագութիւն առնուն յարարածոց:

Զոր և այժմ ի մեզ հասանել<sup>1</sup> մայթենմք որբան հասանենմք: Եւ այժմ աղաւնմք տեսանել մտաւք զփառս աստուածութեանն և զլոյս գիտութեան նորա:

Որչափ<sup>2</sup> հասանելի<sup>3</sup> ե կապեցելոց մարմնով Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամք մերով: Եւ այս պարզէ ի մեզ Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամք մերով, որում փառք յաւիտելանս:

<sup>1</sup> ճառում՝ հաստատել, էջ 28:

<sup>2</sup> ճառում՝ որբան, էջ 28:

<sup>3</sup> ճառում՝ հաստելի է, էջ 28: